

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԳՐԱՐԱՆ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուրջի կես տարվանը 6 բուրջ
Առանձին համարները 5 կոպեկով
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ
Մեր հասցեն. Тифлисъ, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Ստորագրութիւնը բաց է առաւօտեան 10—5 ժամ
(բացի կիրակի և սուս օրերէն).
Ցայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզուով.
Ցայտարարութիւնները համար վճարում են
խւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻՔՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Գիտ աւագ քահանայ և Քամար Յարութիւնեան Աղաճեանցները բրանց գա աղ-
ներով խորին վշտով յայտնում են ծանօթներին և բարեկամներին իրանց ամենաթի-
բելի և անտոնալի որդի վաղաթառամ

ԿՈՐԻԻՆ ԱՂԱՆԵԱՆՑԻ

Մահը, որ տեղի ունեցաւ ամսին 5 ին, Վիկտոր քաղաքում, կարճատև և ծանր հիւան-
դութիւնէն յետոյ, 15 1/2 տարեկան հասակում: Քաղաքը տեղի ունեցաւ Վիկտորի մահու-
միջոցով հոգեհանգիստը կը կատարվի Վանքի աւագ եկեղեցում, կիրակի, ամսին
13-ին, ս. պատարագից յետոյ 12 ժամին:

Փետրվարի 10-ին վախճանվեց իր կալուածքում—Սանադեայում

ՍԵՐԳԵՅ ԹԵՅՄՈՒՐՍ ԶԵԱՆ ՄԷԼԻԲԻԲԻԳԼԱՐԵԱՆԸ

որի մասին հանգուցեալի ընտանիքը յայտնում է իր ազգականներին և ծանօթներին:
Քաղաքը տեղի կունենայ Սանադեայում փետրվարի 13 ին

ԲՈՎԱՆԻԱԳՈՒԹԻՒՆ

Գործի լրջութիւնը. Օգնութեան պահանջ.—
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բազուի կոտորածը
երեք օր պաշարման դրութեան մէջ. Բազուի
աղէտալի դէպքերը. Բազուի աղէտի զոհերը
օգտին. Նամակ Ստորագրութեան. Ներքին լու-
րեր. — ՆԵՐՔԻՆ ԵՐԵՎԱՆԻ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ.

ԳՈՐԾԻ ԼՐՋՈՒԹԻՒՆ

Բազուի դէպքերի չափազանց լուրջ և
անաւոր նշանակութիւնը սկսում է զգաց-
վել մեր երկրի բոլոր խաւերում: Զանա-
զան ազգութիւններին պատկանող մեր
ազգաբնակչութիւնը այժմ աւելի խոր կեր-
պով սկսում է ըմբռնել, թէ ինչ սար-
սափելի վիճակ կարող է սպառնալ մեր
երկրին, եթէ Բազուի դէպքերը արձա-
գանք գտնելու լինէին Ապրիլի սահ-
մաններէն դուրս և վարակէին մեր երկրի
միւս մասերը: Վարչական շրջանների հա-
մար այժմ աւելի քան երբէք է իրանց
է, որ Բազուի փողոցներում տեղի ունե-
ցած սղբերգութիւնը կարող է դառնալ
մի այնպիսի դժբաղդութիւն, որի առաջ
կը նսեմանան մեր երկրի մէջ պատահած
ուրիշ թիւրիմացութիւնները և խանա-
կութիւնները, առաջ բերելով այնպիսի
բարդութիւններ, որոնք յետոյ տարիներ
կը պահանջեն իրանց բաւարար լուծման
համար:

Կովկասեան կառավարչապետի պաշտօ-
նակատարը կարգադրութիւններ է արել,
որ Բազուում միջոցներ ձեռք առնվեն
խաղաղութիւնը վերահաստատելու համար:
Թիֆլիսի նահանգապետը փետրվարի 10-ին,
երկուշաբթի, իր բնակարանում հրակի-
րել էր մի յատուկ ժողով խորհրդակցելու
այն միջոցների մասին, որոնք կարող են
Բազուի աղէտի նման դէպքերի առաջն առ-
նել Թիֆլիսի նահանգում: Գանձակի
նահանգապետը հրաւիրել է իր սօս հայ
և մանկական հոգևորականութեան ներ-
կայացուցիչներին, այլ և քաղաքի ազգե-
ցիկ մարդկանց՝ առաջարկելով նպաստել
ընդհանուր գործակցութեամբ խաղաղու-
թիւն պահպանելու նահանգում:

Թիֆլիսի առաջնորդարանը իր կողմից
առաջարկել է Գանձակի յաջորդին գործ-
ղենի ամեն միջոց՝ բարեկամական յարա-
բերութիւններ պահպանելու թուրքերի
հետ: Նա շրջաբերական է ուղարկել իր
թեմի և սուրբ տեղերը նոյն իմաստով:
Թիֆլիսի քաղաքապետը Թիֆլիսի քա-
ղաքային ինքնավարութեան ծայրաւորների
է թէ տեղական մասերի ու հասարակու-
թեան զանազան խաւերի ներկայացու-
ցիչներին հետ ձեռք առաւ մի շարք մի-
ջոցներ թէ Բազուի աղէտը թուլացնելու
և թէ նոր բարդութիւններ առաջն առ-
նելու ուրիշ տեղերում:
Մամուլը, որքան հնարաւորութիւն ու-

նայ խմբակ փողոցի կողմից, թուրքերը թո-
ղին բազուի և փախան:
Նոյն փողոցի վրա Ս. Առանեանի տան ներ-
քին յարկը ենթարկվեց կատարել կողոպու-
տի, «սրբվեց» բողոքով: Կեցողները կարո-
ղացան մի կերպ պատարարվել վերին յար-
կում, որ ազատ մնաց յարձակումից:
Նոյն փողոցի վրա գտնվող Ս. Բարաջեանի
տունը ենթարկվեց կողոպուտի և կրակի: Թուր-
քերը վառեցին տունը նաւթի միջոցով: Այր-
վեցին Ալ. Աղաճեան իր կնոջ և մի երեխայի
հետ, երրորդը հաւատարմատար թափոնեան:
Աղաճեան վերին յարկից, որքան կարողա-
նում էր, հարուստում էր թուրքերին, բայց
յետոյ, երբ հրդեհ սկսվեց, անկարող եղաւ ա-
զատվել: Նրա երկու որդիները, որոնք այդ
օրը դուրս էին եկել տնից և դպրոց գնացել,
ազատվել են մահէն:

Այդ տիկինը կարգադրանքի տունը մատնեց
կրակի. այրվեցին ինքը և նրա մայրը:
Կրակի մատնեց և Յակոբջանեանի տունը
և թաւանի ենթարկվեց տան ներքին յարկում
գտնվող Ալեքսանի խնուրթը:
Ես չեմ նկարագրում այն սարսափելի տե-
սարանները, որոնք տեղի ունէին թէ այդ
անհրոճ և թէ փողոցի միւս մասերում: Դա
մի դժուր էր կատարելագէտ:

II

Գալով Թիֆլիս՝ ես դեռ եմ գտնվում եմ Բա-
զուի սարսափների ազդեցութեան տակ և չեմ
կարող հանգիստ կերպով պատմել եղելութիւն-
ները: Բայց անհրաժեշտ եմ համարում «Մշա-
կի» միջոցով ուղղել մի քանի սխալ լուրեր,
որ ստացվել են Թիֆլիսում Բազուից: Դժուր
է սխալներ անելը, որովհետեւ մենք կղզիա-
ցած էինք միմեանցից և չէինք կարող ստուգել
լուրերը:

Յամենայն դէպս սխալ է Գրեգոր քահանայ
Գրեգորեանի և նրա աղջիկների սպանման
լուրը: Ընդէ է, թուրքերը մտեցել են տէր
հօրը, բայց նրանից, իբրև բահանայից, հեռա-
ցել են:

Դերասանուհի տիկին Սիրանոյշ կենդանի է:
Նա ապրում էր մի թուրքի տանը, որի աչքը
պաշտպանում էր իր բոլոր կեցողներին:
Սխալ է այն լուրը, որ սպանված է բժիշկ
Տէր-Կարապետեան և իբր թէ նրա ժամինը
մի ամբողջ օր ընկած է եղել Մօրօկանեան այ-
գո մ: Բակապէս սպանվել է բժիշկ Կարաբե-
գովը, ծագումով թուրք, ինքը բաւական լաւ
մարդ: Նրան ընդունել էին հայ տեղ և գնդա-
կահարներ:

Սարսափելի մահի ենթարկվեց Բալաբէգ Լա-
ւայեան իր կնոջ հետ: Թուրքերը նախ թա-
լանեցին տունը, յետոյ սպանեցին նրանց:
Լաւայեանը դիմադրել է բաւական ուժեղ կեր-
պով, բայց յարձակողների թիւը մեծ էր:
Յարձակողները առաջարկում են կնոջը հե-
ռանալ ամուսնուց, խոստանալով նրան ազա-
տութիւն. բայց կնոջ չէ բաժանվում իր մար-
դուց և երկունս էլ սպանվում են:

ԵՐԵՎ ՕՐ ՊԱՇՏԱՐԱՆ ԴՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ
(Տպաւորութիւններ)

Անդէնութիւն.—Յուսահատութիւն և արհեստ.—Փող-
վորը և նրա պաշտպանները.—Ասիկը վշտեր.—Ինչ
վիճակ է սպասում մեր արեւմտաբերութեան:

Ես չեմ խօսելու, թէ ինչպէս սկսվեց և ինչ-
պէս շարունակվեց XX դարի այն զարհուրելի
չարագործութիւնը, որ արդէն յայտնի է լրա-
գրութեան մէջ «Նայ-թուրքական կոտորած»
անունով, այլ պիտի յիշեմ այն օրեր տեղ
բազուի մասին, որ տաք երեւակայութիւնը
շրջապատող առ ու զողի, վշտի, ցաւի և յու-
սահատութեան տակ, բողբոջում է և մէկը
միւսից աւելի վառ, արիւնազանգ պատկեր-
ներ ստեղծում: Զգում եմ, որ ոտքից ցղուել
զգայնացած եմ, բայց մի և նոյն ժամանակ
շատ մտիկից լսվող մի ատրճանակի ձայնիւն
էլ կտրականապէս անզայացնում, բթացնում

է բոլոր զգացմունքները և քայտապէս բեզ
տրեում է միմիայն ցանկութիւն—պաշտպանու-
թեան եթէ ոչ անձի, այլ գէթ բեզ շրջապա-
տողների, որոնք խղճուկ, սրտաճմլիկ և յու-
սահատ աչքերով բեզ վրա են յառում իրանց
անմեղ և զարհուրանքից ցնցվող դէմքերը...

Բնւմ. բնւմ. բնւմ...
Նայում ես շուրջը, սիրտդ ձմրվում, դալիա-
նում է, բազուկներդ թուլանում... անդէն ես...
Թէ ինչ ողորմելի, սարսափելի բան է անդէ-
նութիւնը այն քայտիւն—եղբ գզում ես, որ
բերտ, վայրեն և անսիրտ ոյժը, եւրօպական
կուլտուրայից միմիայն նրա գէնը վերցրած,
ամեն կողմ մահ սփռելով՝ գալիս խոյանում է
բեզ վրա—այդ միմիայն կարող են նրանք
զգալ, որոնք զժաղգութիւն են ունեցել զար-
հուրանքի այդ քայտիւնը համարելու...

Երկուշաբթի առաւօտ է. տեղեկանում եմ,
որ դուրը հանգարտ է. նախազգացմունքս ինձ
արգելում է, բայց այնուամենայնիւ որոշում
եմ երեխաներին ուսումնաբան ուղարկել՝ ու-
ղեկցով: Կինս գնում է թատրոն փորձի. կէս
ժամ անցած եմ եմ տանից դուրս գալիս, և
հազիւ մի քանի քայլ փոխած մի խումբ հայեր
ինձ յետ են դարձնում յայտնելով. «Բազար-
նայիս փողոցում թուրքերը յարձակվել հայե-
րի վրա կոտորում են. բոլոր խնուրթները
փակված են» և այլն. չեմ կարող գրի առնել
իմ այդ քայտիւն զգացմունքս. միայն ինձ
շրջապատողները նկատեցին, որ ես դիակի
նման դեղինեցայ. ում, որ մէկի մասին մտա-
ծէի... այդ քայտիւն նկատեցի, որ մի խումբ
հայեր լեզապատառ փախչում էին դէպի մեր
կողմը... դրան հետեց մի քանի ատրճանակի
հարուստներ, որից ստիպված անմիջապէս
տուն մտայ. դիմեցի իսկոյն տանտիրոջ, որ
մեր տան 88 ընտանիքներին պաշտպանող եր-
կու խղճալի դուները անմիջապէս փակել տայ,
յայտնելով մի և նոյն ժամանակ, որ դուսա-
պանը միայն թող դուրս բաց անէ նրանց, ո-
րոնք տան բնակիչներն են... այս տարրական
խնդիրը չը կարողացաւ ըմբռնել մեր հաստա-
գլուխ տանտէրը, որի պատճառով 2 երեխայ և
երկու ժապիներ վերքեր ստացան զինուորների
հրացաններից... Լաւ էր, որ այսքանով միայն
վերջացաւ...

Ամբողջ տունը այլեւոճվեց... տակն ու վրա
եղաւ. հրացանների և ատրճանակների պայ-
թիւնը սկսեց լսվել աւելի յաճախ, աւելի մո-
տիկ. պարզ լսվում էր կարծես օդի մէջ սա-
ւանող մահաւան թիւերի սուսիւնը...

—Բնւմ, բնւմ, բնւմ...
Այդ ամեն մի հարուստը կարծես դիպչում
էր սրտիս, գլխիս, մարմնիս բոլոր երակնե-
րին. զանազան և բազմաթիւ, մէկը միւսից
աւելի յախուսւմ, մէկը միւսից աւելի սուղա-
լի մտքեր գալիս ընդհարվում էին գանգիս և
ալիքներին նման յետ քայտում նորից աւելի
ուժեղ, աւելի լինանացած վերադառնալու և
կրկին փռվելու... Լուրեր էին գալիս հետզ-
հետէ քաղաքի զանազան կողմերից մէկը միւ-
սից աւելի ցնցող, մէկը միւսից աւելի զար-
հուրելի: Եւ սուկուճը և յուսահատութիւնը
հետզհետէ աւելանում էր:

Այս վիճակում էի ամբողջ 4 ժամ, 4 տար-
վայ չափ տեղ 4 ժամ—երբ կինս գնացել էր
ուսումնաբան (Բազարնայա փողոցին կից) և
համարեա կրակի միջոց հանել և բերել էր ե-
րեխաներին տուն: Ես ոչինչ չէի տեսել, բայց
նա տեսել էր վայրեն թուրքերը, ատրճանակ-
ների պայթիւնով օդը թնդացնելու և նրանց
հանդիսատես զինուորներին ու կողակներին՝
օդի խմելու... տեսել էր թափված դիակներ,
տեսել էր արիւն. արիւն փողոցներում, արիւն
սալայատակներ վրա...

Ես ընակ՝ եւմ էի սուղաւանքի վայրից բա-
ւական հեռու, երկաթուղու կայարանի մօտ.
վերադարձան ողջամբ կինս ու երեխաներս...
Իսկ միւսները... ընկերներս, բարեկամներս,
վերջապէս հայ ժողովուրդը, թշուառ, խեղճ,
անմեղ ժողովուրդը. այն ժողովուրդը, որ է

ձեռքից առանց խզանարկելու ոտակահաները խրուած էին այդ ողորմելիներէ, այդ անտէր լըված ժողովրդի ձեռքից նրա վերջին և միակ յոյսը—ղէնքը՝ և բաց թողնում. թողնում՝ ան մտնել ոչխարի նման կտրիճի առաջ... Ի՞նչ էր անում Բալխասին, այն հուժկու, առողջ, հայ ժողովրդի կենտունէի տարրը, որ դառն քրտինքով, հալալ աշխատանքով ձեռք էր բերում իր օրապահիկը. նա մեր պարծանքն էր օտարների առաջ, ինչ էր անում Սև բաղաբի սևով շաղախված, ձեռնառազից առանց այդ էլ դանուկիան դատապարտված թշուառ ժողովուրդը. ինչ էր անում Շամախու փողոցը, ինչ էր անում Չէմբէրէքէնը, ինչ էին անում Բերդ անուանված լաբիւրնիթոսում՝ թուրքերէ հետ խիտ առ խիտ բնակվող հայ խզուկ ընտանիքները, ինչ էր անում Բերդէյրթը, ինչ էր անում Հայոց գիւղը, ինչ էին անում այս բոլորը. չէ՞ որ սրանք մեր եղբայրներն են, մեր ժողովուրդն է, կլին, մարդ, պատանիներ, երեխաներ, ծծկաններ, բոլորը անտէր, բոլորը անպէս, չըլլապատված վայրագ, արիւնարու դէմքերով, բոլորը լըված, այն լըված ամենքից...

—Բայց շատ ես խօսում—նկատեց կինս...

Զարգովում է հայ ժողովուրդը, անմեղ ջարդում է ջարդվում է հարևան թուրքը, անմեղ կորչում անհետանում է իսպառ միլիոնաւոր մարդկանց ապրուստի միջոցը. ջնջվում է երկրի հրետից 50 տարիների դառն քրտինքով ձեռք բերված և հազարաւոր զոհերի արեւելով ոտոցված մի արդիւնաբերութիւնը, նախալին արդիւնաբերութիւնը, որի հետ կապված է նրա կամուրջը և զինակներով ոչ միայն Գովաստը, այլ և ամբողջ Ռուսաստանը, նոյն իսկ արտասահմանեան շատ հրապարակներ, մինչև Ամէրիկա... մենք ցաւում, ողորում ենք մեր աչքի տակ նաւատար մի ողջացումը, որ մեզինք մի քանի 100 միլիոնների տարեկան ծախս էր պահանջում և սառն արեւմուտք, անասրբեր նկատում ենք նոյնն և նրանց աւելի արժողութեամբ արդիւնաբերութեան՝ բնակչութեան, գործատուների, զօրքի և վարչութեան աչքի առաջ ոչնչացումը. մի արդիւնաբերութիւն՝ որ ոչ թէ հարկաւոր միլիոնների ծախս է պահանջում պետութիւնից, այլ հարկուր միլիոնների եկամուտ է աւելի գանձին։ Վարչութիւն, հասարակութեան բոլոր խաւերը, զօրք, այս բոլորը պարտաւոր են իրանց բոլոր ձեռքի տակ ունեցած միջոցներով պաշտպանել ժողովուրդը, պաշտպանել արդիւնաբերութիւնը. նրանք սնորհ կապերով կապված են. կենքի, գոյքի ապահովութիւնն է արդիւնաբերութեան բարգաւաճման միակ և զլխաւոր առնաւանդն. Թուրք տարրը արդիւնաբերող չէ, նա ստանում է միայն իր հողի կապալագինը և իր տարբ մուշտակում փաթաթված, հանգիստ վայելում է նրա արդիւնքը, առանց աշխատանքի, առանց քրտինքի։ Եւ հարցնում եմ մեր թուրք եղբայրներին. ձե՛լ է մշակում ձեր հողերը. ձե՛լ է վարձում ձեր տները. ձե՛լ է հողի մէջ թաղում իր հարկը հազարների արժող գրամապուրները... Զարգել, փշրել, ջախջախել, ոչնչացնել այդ շատ հեշտ և բայց արտադրելի է գո՞ւար, ստեղծելի է գո՞ւար. թող լաւ, շատ լաւ մտածեն մեր թուրք եղբայրները և լալ իմանան, որ կայ մի իշխանութիւն, որ կարող է պատժել չարագործներին. և ամեն մի մասնակի սպանութիւն թող նա դատէ ու պատժէ։ Ա. Վ.

ԲԱԳՈՒԻ ԱՂԻՏԱՆԻ ԳԵՊՔԵՐԸ

«Ի. Օ.» լրագիրն իր աշխատակիցից ստացել է երկրորդ նամակը, որ առաջ ենք բերում ամբողջապէս։ «Բագու, 8 փետրվարի, ցերեկվայ ժամը 4-ին։ Հաղորդում եմ հայ-թուրքական կոտորածի հետեւեղ մանրամասնութիւնները։ Լոյս 8 ի գիշերը համեմատաբար խաղաղ անցկացաւ, բայց առաւօտեան հրաձգութիւնը նորից սաստկացաւ։ Իմ զբաղու ննջարանն ընկաւ մի գնդակ։ Ծառայող գուրս ուղարկված աղախինը—ուսու—լուր բերեց, որ թուրքերը պահանջում են 25 բ. իրանց աղ բաւներէ համար։ Տանակըը (Իււթեանց) մերժեց։ Գէս ժամ յետոյ, երբ զբաղեց, բերհով այդ տան մէջ բնակվող, ընտանիքով սեղափոխվում էր տանտիրով ընակարանը և երկաց վիրտում, նրա վրա կրակ բացին։ Գուրովը թաղվեց պատի մէջ, նրա վրին վիրտում։ Եւ հէնց այնտեղ էի։ Կանայք հիստերիկաբար հեծկտացին... Չը կամենարով գնդականը լինել իմ սեփական ընակարանում, եւ ուղևորվեց։ քաղաք։ Փողոցներում մահացու լուրերն էր տիրում։ Տեղեկացայ, որ գերեզ-

մանցում, դիակներին տնակում 100 մեռել կայ։ Հետախօսի գանցը տարիս եւ Միքայէլեան հիւանանոց։ Այստեղ կայ 25 սպանված և 75 վիրաւոր։ Փողոցներում էլ կան թափված դիակներ (50-ի չափ, խմբագրութեան ծանուների հաշուով)։ Նիխորեակի փողոցով գնալիս ես տեսայ թէ ինչպէս 4 պրիստաններ աչքի առաւ և կազակները դիմացը, իմ ետեւում սպանեցին մի հայի, գնդակով ծակելով նրա գլուխը։ Արեւն զօրեղ հասանքը ողողեց մայթը. Մարգասպան թուրքը, արժանաւարով ամբոխի խախտանքն, անպատեղա բերդում... Հեռախօսով զանգ եմ տալիս նահանգապետի ընակարանը, որպէս զի խնդրեմ մի խումբ թուրք-երեսանների (բոլորն էլ ամբանախնդրով զինված)—որոնք այլանդակութիւններ են անում գերեզմանատան փողոցներում. ապակիներ են կոտորւում, անց ու զարձ անողներին սպանում են զէնքերով, գարծոններ են ածում վայրերի աղապահներով և այլն։ Ինչ չեն պատասխանում... Վիզիտներ փողոցում մի կանաւի մէջ ընկած է մի սպանված հայ երեխայի դիակ... Մալակաւի այգում արգէն երկրորդ օրն է ընկած է սպանված մի բժիշկի դիակ։ Այսօր իմացայ, որ սպանված է գիմնագետ Լեբեզովը։ Ընդհանուր ամամբ առայժմ բոլոր զոհերի թիւը համարում են 250. Ինչ կը լինի յետոյ—չը գիտեմ։ Վախեւում են թալաններից և սովից։ Այս րօպէլիս գնում եմ բողոքելու պրոկուրոր Վորեճովի մօտ վարչութեան անտաքերի և անտան վերաբերուող զէմ կատարած դէպքերին։ Երբ յանդիմանում են զինուորներին, թէ ինչո՞ւ չեն ձերբակալում և զինաթափ անում կողոպտիչներին, զինուորները պատասխանում են. «Մեզ չէ հրամայված խանութը...»։ Ներքեց անշնորհ գրիւտու հարձակ—ժամանակ չէ այդ մասին տասնծիրու Արիւնայի սարսափները, որ տեղի են ունենում փողոցում, բառացի կերպով բարացնում են մարդու կամքը և միտքը... Վճ. Գ. Վճ. Գ. Վճ. Գ. միայն զնուղակի այդ ձայներն են լսվում։ Մի անտորը թալանի հնչում է մարդու սիրտը. Զարմուրեթի էլ զարմուրեթի...»

«Ի. Օ.» լրագիրն այսպէս է բացատրում Բագուի արիւնոտ սարսափների սկզբնապատճառը։ «Կամ, աւելի ճիշդ կը լինէր ասել, նրա լոկ առիթը,—անհելով ականատեսների հաղորդածներէրը։

«Բագուից երէկ թիֆլիս եկածները պատմածները համաձայն այնտեղ տեղի ունեցող զարհուրելի կոտորածի պատճառը հետեւեալն է։ Անցեալ տարի Աշուր-բէկ անունով մէկը խաբարով իր ժօռ է տանում մի հայի երեխայի և նրան զղուելի բնաբարութեան ենթարկում։ Դա տեսնող յետոյ նրա ժօռ է գնում Մարզիս անունով մի հայ և նախապաշտպանում նրան, որ եթէ նա նորից թող կը տայ իրան մի այդպիսի բան, այն ժամանակ հայերը կը սպանեն նրան։ Իրանից մի քիչ ժամանակ անցած Մարզիսին սպանեցին, իսկ Աշուր-բէկին ձերբակալեցին և դատի ենթարկեցին։ Երբ Աշուր-բէկին դատարանից ուղարկում էին բանտ, նա խնդրեց, որ իրան ուղեկցող զինուորներին մէջ հայեր չը լինեն։ Բայց այնպէս է պատահում, որ ուղեկցող զինուորներից Չը հայ են լինում։ Ծանապարհին Աշուր-բէկը փորձում է փախչել և սպանվում է զինուորներից մէկի գնդակից։ Իրանից յետոյ, Աշուր-բէկի վրէժը հանելու համար, նրա ազգականներից մէկը մտնում է հայոց եկեղեցու բակը և այնտեղ սպանում է այն զին ուրին, որը սպանել էր Աշուր-բէկին։ Այնտեղ, եկեղեցի գնացած հայերը բռնում են մարգասպանին և յանձնում ոստիկանութեանը, որը, նըրան փողոցով անցկացնելով և ծովելով անկիւնը, բաց են թողնում։ Այն ժամանակ նա նորից վերադառնում է եկեղեցու բակը և երիք անգամ կրակում է ատրճանակը, առանց մէկին կացին կարողանալու։ Այդտեղ՝ արդթողները մի բանիսը, որ ատրճանակներ ունեկն, մի քանի անգամ կրակ արին նրա վրա և տեղն ու տեղը սպանեցին նրան։ Թուրքերը վերցնելով սպանվածի դիակը, դրին նրան մի սարլի վրա և, մոլլայի ուղեկցութեամբ, ապահով մաս անելով թուրքական թաղերով, կոչ անելով վրէժ լուծելու գեւաւորներից։ Իրանից յետոյ և հետեւեղ օրը սկսվեցին չը տեսնված և ինքնօրինակ ջարդերը։

Իս, ի հարկէ կարող էր լինել լոկ մի պատրուակ և ոչ ինչպիսի պատճառ։ Թուրքերի գրգռված ու անմիտ ֆանատիկութեան պատճառը որոնելու է աւելի խոր տեղեկում... Գուցէ Բօսֆօրի ափերին և ուրիշ համանման վայրերում... Եթէ ոչ մի անհատի մահը, այն էլ մի մարգասպան սրիկայի մահը չէր կարող

այդպէս զրգուել մի ամբողջ հասարակութեան։ Իսկ այն անժխտելի փաստը, որ բոլոր թուրքերը զինված էին բերդաններով ու խոշոր ատրճանակներով... Ո՛չ, դա մի զոխային մեքենայութիւն է։

Թիֆլիսի պարսկական հիւպատոսը փետր. 7-ին մի հեռագրի ստացաւ Բագուի պարսիկ հասարակութիւնից, որով հաղորդում էին այնտեղի զոխային զէպքերի մասին և խնդրում զինուորներ։ Հիւպատոսն անմիջապէս զինուոր կողմանի կառավարչապետին, որպէս զի նա ձեռք առնէ միջոցներ ապահովելու պարսկական բազուկներին կենսաբ. գոյքը։ Կառավարչապետը պատասխանել է, որ բոլոր հարկաւոր միջոցները ձեռք են առնված։ Հիւպատոսն անմիջապէս հեռագրում է Պետերբուրգի պարսկական դեսպանին, որից հետագիւր է ստանում, որ արգէն հաղորդել է այդ մասին ուսաց և պարսից արտաքին գործերի մինիստրներին։ Հիւպատոսը նորից հեռագրում է Բագուի պարսկահպատակներին, որ ամեն միջոց ձեռք է առնված, հանգիստ և ճշգրտագ մնան։

Վրաց ազնուականութեան պարագլուխ իշխան Մելիքովը հետեւեղ հեռագրին է ուղարկել Բագու, Հալի-Չէյնալ-Արդին-Թաղիեվին. «Մահապահաններին ազգակից նահանգի ազնուականութեան անունով և անձնապէս իմ կողմից դիմում եմ ձեր ազնիւ սրտին և նահանգային խնդրում եմ ձեր ազգայնութեամբ միաւորել մեր ընդհանուր հայրենիքը սիրող բոլոր անձերին՝ դաբարեցնելու եղբայրասպանութիւնը և խաղաղութիւն հաստատելու։

Իշխանը մի ուրիշ հեռագրի էլ ուղարկեց նոյն օրը Ֆարուկ-բէկ Վէլիբովին. «Աղերսում եմ քեզ յանուն մեր բարեկամութեան, ետանդային խնդրում, ինչպէս ազնուականութեան պարագլուխ, անձամբ իմ կողմից և բոլոր ազնուականների կողմից՝ քեզ և հայրենիքը սիրող բոլոր անձերին՝ միաւորել ձեր ուժերը, գործադրել բոլոր ազգայնութիւնը խաղաղութիւնը վերականգնելու և եղբայրասպանութիւնը դաբարեցնելու համար։ Մահապահաններին ընտանի նահանգի ազնուականութեան ձայնը կոչ է անում նրանց ազնուականը, և դու, համոզված եմ, կարող կը լինես հասցնելու այդ ձայնը բոցաղակներին սրտին»։

III
«Ճնօրին Փուրցելի» յօդուածը. Միջա կտրատող լուրեր են հասնում Բագուից,—ասում է «Ճնօրին Փուրցելի» լրագիրը։ Մի ժողովուրդ յարձակվում է միւսի վրա և արիւնով են ողողվում փողոցները և տները. թափվում է անմեղ երեխաների, թող կանանց, հայրերի և թուրքերի արիւնը։ Գողացնում ամբողջ անիւնայ և անուշաղ ոչնչացնում է եղբայրներին... Այդ էր պակաս մեզ... Այդ էր պակաս մեր դժբաղը և աղբառ երկրին... Թող ուրախանայ մեր թշնամին։ Գորցելիք մենք յարգանք նրանց աչքում, ով համակրում էր մեզ։ Վարկենի Կովկաս, վայրենի կողմացիները՝ սասում էին նրանք ամեն տեղ և այժմ մենք ինքներս տալիս ենք նրանց ձեռքը այդ իրաւունքը, մենք ինքներս ենք մեզ համար գերեզման փորում... Եւ ինչ ժամանակ է կատարվում այդ բոլորը։ Երբ պէտք է միանան բոլոր ճնշվածները և հարկանները, երբ հարկաւոր է միքանս աշխատանք յօդուած մեր երկրի ընդհանուր շահերի։ Այս մի այդպիսի ժամանակ մենք յարձակվում ենք միմեանց վրա և գազանացած սպանում ենք եղբայրներին... Ամօթ... Ամօթ նրանց, որոնք կարող էին և չը կանեցան կամ չիմացան խաղաղութիւն հաստատել մեր մէջ, այլ ընդհակառակն, ոչ միայն զինուորներից մեզ միմեանց զէմ, այլ և իրանց օրինակով ազգային թշնամութեան նշանաբան էին ծառայում խաւար ամբոխի համար։ Մի թէ մըցութիւններ և երկպառակութիւններ չը կան մեր երկրից դուրս գտնվող և ուրիշ ազգերի մէջ։ Սակայն այնտեղ դանակը և գնդակները չեն տեսնում իրանց վերջնական հաշիւները. դա վայել է միմիայն վայրենիներին։ Ո՛վ է մեղաւոր, ձե՛վ կը նստեցնէ մեղադրեալներին նստարանի վրա ապահով անկողնապատէ պատամարանը, երբ կը խօսէ այդ սարսափելի արիւնահեղ սպանող բանի մասին... Բոլորին, բացի միայն եղբայրական արիւնը թափող այդ թշուառ ֆանատիկներին և այդ գազանացած մարդկանցից... Բոլորին, բացի այդ դժբաղներէրց, որոնք ապրում են օգիւտութեան խաւարի և կոպիտ անշարժութեան մէջ... Վերջում լրագիրը հրաւիրում է մեր երկրում ապրող գնահատան ազգերի իտեղիզէնա ներկայացուցիչներին ուշը դարձնել այդ արիւն-

ահեղ դէպքերի վրա և միջոցներ գտնել միանգամից ընդ միշտ այդ դժբաղը փաստերին վերջ դնելու համար։ «Հասել է ժամանակը»—ասում է լրագիրը... IV

«Тифлис. Листоень» լրագիրը. Ոչ, ոչ, ես չեմ կարող պատմել ձեզ այնտեղ պատահածի տասերորդ, հարիւրերորդ մասն անգամ։

Պէտք է աչքով տեսնել այդ բոլորը, որ գտնէ կարելի լինի աղօտ կերպով ներկայացնել այնտեղ պատահած արիւնահեղ դրաման։ Զօրքերը ոչինչ չեն կարող անել, ոստիկանութիւնը անզօր է ճնշելու ապստամբութիւնը։ Պատրուկները, հանդիպելով արիւնարու թուրքերին, թողնում են նրանց անցնել իրանց մօտով, չը խլելով զէնքերը։ Բալխասանից և Բագուի նաւթահանքերից շարժվեց բանուր հայերի ամբողջ իրանց հաւատակիցներին օգնելու համար։ Ամբոխին զինաթափ արին և չը թողին ներս մտնել քաղաքը։ Սարունչից եկան մեծ քանակութեամբ զինուորված թուրքերը։

Ընդհանուր համոզումը է տիրում, որ հայերի այդ բոլոր կոտորածը, այդ սարսափելի սպանդարանը մէկը կազմակերպել է։ Բոլոր թուրքերը մինչև փողոցային վերջին համբալը զինաւորված են խնչախներով, բէրութիւններով, բեկովքներով։ Ծառերի մօտ տեսել են արբունական նմուշի բեկովքները։ Ո՞րտեղից ուրբունական նմուշի բեկովքները—անյայտ է։ Ժամ առ ժամ սպասում էին, որ կոտորած կը սկսվի Բալխասանիում և ուրիշ նաւթահանքերում։

Օղբ թնգում է գազանացած ամբոխի վայրենի աղաղակներով... Ամեն տեղ հեծեճանք, լաց և արտասուք... Ամեն տեղից լսվում են հրացանաձգութիւններ...

Կատարվում է մի ինչ որ անելի, սարսափելի բան... Արիւնահեղ դէպքերի առաջին օրը հիւանդանոց են բերված 34 դիակ, զրանցից բոլորը հայեր են, մէկը վրացի։ Գնդակները բոլորը թիկունքից են ստացել։ Թուրքերը ետեկցն էին հրաձգութիւն անում... Փակված է նաւթարդիւնաբերողների համաժողովը։ Սարունչիում կողոպուտված են հայերի բոլոր խանութները։

Ընդամենը յամենայն դէպս սպանված են ոչ պակաս 1000 մարդու։ Թէյարաններում և տրակտորներում թագնված թուրքերը կրակում էին հրացանները անցնող հայերի վրա։ Բագուում ամենին ոստիկաններ չեն երևում։ Բոլոր թուրքերը զինաւորված են բերդակալներով և նրանք մեծ քանակութեամբ փամփուշտներ ունեն։ Մի անգլիացի պատուում էր իրին, որ արիւնահեղ դէպքեր սկսելուց մի օր առաջ թուրքերը իրան նախապաշտպանում էին, որ նա մի որ և է տեղ թագնվի, որովհետեւ քաղաքում կոտորած կը սկսվի։ Սպանվածների մէջ է տեղական հարուստներից մէկը՝ Ալէքսանդր Յովի. Արամանը իր երեխաների հետ միասին։ Կայացանում ինչ որ մի ստեղծող բան է կատարվում։ Բոլորը, ով կարող է փախչում են քաղաքից։ Տեղական փաստաբաններից մէկի պ. Մ. սօնի ընտանիքը, որը ապրում էր հայ ազգաբնակչութեան կենտրոնում, մի կերպ կազակների պահակի հովանաւորութեամբ կարողացաւ փոխադրվի «Եւրօպա» հիւրանոցը։ Իմանալով, որ այդտեղ ապրում են շատ օտարապատակներ, թուրքերը այդ հիւրանոցին չէին մօտենում։ Պ. Մ. ի կնոջ վրա բոլոր պատահածը այնպիսի սարսափելի տպաւորութիւն գործեց, որ նա ջղային հիւանդութիւն ստացաւ։ Այդպիսի հիւանդները քաղաքում, ի հարկէ, շատերը կը լինեն։ Սպանվեց, ի միջի այոց, թուրք Աշ Էրբէզովը։ Սպանվեց նա Պարապետի վրա այն ժամանակ, երբ Ֆայէտոս նստած, նա կրակում էր հայ ամբոխի վրա... Բաղաբից դուրս եղողները, Ֆայէտոսները չը գըրսնելով մի կերպ կազակների պահակի հովանաւորութեամբ հասնում էին մինչև կայաբանը։ Ֆայէտոսները քաղաքից մինչև երկաթուղու կայարանը տանելու համար առնում էին 15 րոբըլ։

Այս առ այժմ բոլորը, ինչ որ ես ձեզ իսկոյն կարող եմ պատմել։ Հազիւ թէ շուտով սկսվի ընդհանուր հանգստութիւնը։ Ժողովուրդը չի հանգստանայ մինչև որ երևան չը հանվեն այդ ամբողջ սարսափելի կոտորածի իսկական յանցատուրները, զբողոքներ և համագողները։ Սուտանը, որ անկողնապատէ դատարանը մատնացոյց կանէ իսկական մեղաւորների վրա, պատշաճաւոր հատուցում կը տայ և նրանք իրանց արժանի պատիւը կը ստա-

նաւ... յուզվա... սովոր... 1) սրտա... ձեռք... բար... սեր... որ... նեան... Բէկ... նեան... Ա. Գ... 3. Յ... սեան... Աւա... ընտ... կան... Սախ... Ս. Ի... Ստե... սեան... թիւ... 20 կ... Սա... զի... ներ... գար... և որ... Մ... 2) 25 ո... ձեր... ներ... աղ... Գա... Շա... 4) Ա... բոս... Մի... 3) տե... Մա... 5 բ... Եո... 2. Բ... 5 բ... Եգ... 6 բ... ձեռ... տի... 40 կ... սով... 20... Բի... Կեն... 100... որ... գո... ստ... «Մ... ստ... Է... «Մ... տա... Գր... բու... առ... Է... «Մ... տա... Վ... մի... կա... որ... հա... սպ... լու... ապ... ան... մա... էր... որ... ու... լու... յո...

խանութի երկրպետ Ծէօղօրօփան Հեսէնի
մեծ իշխանի հետ, ապա Հեսէնի մեծ իշխան
նունի, Մակիջ Կորուրդ Գոտայի գրութիւն
և Բատունեբեզի իշխանունի: Պատարա-
զից յետոյ դազարը դրօնց սարկօֆայի
վրա և ծածկվեց արծաթէ ծածկուցով:
Այդտեղ բերված են արծաթէ պսակներ. հա-
սարակ պսակները ծաղիկները ներկայ եղող
ները վերցրին յերատակի համար: Իր ճ. ու
սկզբում միտրօպօլիտը գրեց Մեծ Իշխանու-
նուն միջնաբերկան խօսքերով և նկատեց
ներկայ խոզովից ժամանակը, ասելով, որ
Մեծ Իշխանի արիւնահեղ մահվան մէջ սկզբ-
ւոր է սուս հասարակութիւնը: Մեծ Իշխան
արտերտի արիւնը, իբրև հին մարտիրոս-
ներ արիւնը, որ ծառայում էր հաւատի և
ճշմարտութեան նպատակներին, հանդիսանում
է հասարակութեան զղջման և բարոյական
սթնփման սերմը: Ներքը մեզ, թանգագին
Մեծ Իշխան—մարտիրոս, թարված արիւնի
համար և մի դատապարտութիւն սկզբի
այժմ, այլ երբէք Գու չես մենի ուս ժող-
վրդի յիշողութեան մէջ, իսկ մենք Չերմ կա-
զօթնք Գո հոգու հանգստութեան համար:»

11 փետրվարի

ՊԵՏԵՐՅԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԽԵՐԷՅԻ ԳԻՏՈՐ
ՊԵՏԵՐՅԱՆ ԱՐԽԵՐԷՅԻ ԳԻՏՈՐ
ՊԵՏԵՐՅԱՆ ԱՐԽԵՐԷՅԻ ԳԻՏՈՐ
ՊԵՏԵՐՅԱՆ ԱՐԽԵՐԷՅԻ ԳԻՏՈՐ

առանձին յանձնարարողի առաջին իտար Կո-
րեկի նախագահութեամբ: Երկարատե խորհր-
դակցութիւնից յետոյ խորհրդակցութիւնը միա-
ձայն այն կարծիքը յայտնեց, որ թէ մայրա-
քաղաքի և թէ գաւառական պարբերական մա-
մուրը պէտք է առանց ցէնզուրայի լինի և
մամուրը պատասխանատու պէտք է լինի մի-
այն դատարանի առջև: Յունվարի 6-ի դրժ
բաղդ դէպքի պատճառով այժմ գինւորական
դատի են կենթարկված գվարդիայի հեծեալ
արտիլերիական բրիգադայի առաջին բաժա-
րէայի հրամանատար կապիտան Գալիբով,
չարա-կապիտան Կարցով, Պոզդորոչիկ Բոս
Առաջին և Բոս Երկրորդ և երեք զինւոր, նոյն-
պէս և ընդհանուր շտաբի փոխ գնդապետ
Պոլովցով:

107706: «Յնւարայ Նիւս» գործակալու-
թեան տեղեկութիւնները համեմատ, սուս
գործակալները Լոնդոնում Պետերբուրգից
հրահանգներ ստացան չը վարձել այլ ևս ած-
խատար նաւեր Վալիվոստակի համար:
ՏՕԿԻՕ: 3000 կազակներ երկու թղթանօթով
փետրվարի 8-ին լուսաբացին երկացին Սայ-
չէնից դէպի հարաւ և յարձակում գործեցին
պահակախմբի վրա Տանդիստունում Հին և
Նոր Նիւ-Չիուսնի մէջ: Ռուսները յետ մըզ-
վեցին: Նրանք փչացրին երկաթուղին և հե-
ռուակը: Բայց զնամված տեղերը շուտով
կարկատեցին:

ԵՄԻՆՆԱԿԱՆ ԱՆՔՈՒՆԻՐ ԳԱՆՆԱԿԱՆ
Հրատարակչներ՝ ՔԱՎԻՆՆԻ ՏԻԳՐԱՆՆԱԿ
ԻՍՏԱՆԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՍԱԿԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԹԵՃԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԻՐՈՒՄ ՔԱՍՏՐՈՆ
Ձեռնարկութիւն հայերական թատրոնների
արտառ և. Կ. Բոնալդի

Այսօր, շաբաթ, փետրվարի 12-ին ժամանակ-
ցութեամբ տ.ա. Գոնալդ-Ելիսէվալդի, Գիտա-
բերական-Պոլիտեխնիկայի, Գորակայի, Չասլա-
սկայի, պ.պ. Պորտուալովի, Գալիցկու, Գեմա-
նիկի, Պորտրիտիկու, Չալիսկու և Մու-
րատովի:

Կը ներկայացվի
«M-1 Ն Ի Տ Ո Ւ Շ»
Կով. օպ. 4 գործ. երաժ. Հերվէի:
Սկզբը և երկրորդան 8 ժամին:
Կինը սովորական են:

Վաղը, կիրակի, փետրվարի 13-ին երկու
ներկայացում. Գերեկվայ, կը ներկայացվի Գե-
ՄՈՆ, երաժ. Ռուբինովի. գերեկվայ ներ-
կայացում, բենիֆիա Մ. Մ. Բունալովայի,
մանակցութեամբ Լ. Գ. Գոնալդի, կը ներկա-
յացվի ԳԱՐՄԷՆ, օպերա 4 գործ. երաժ. Բի-
զէի: Երեքշաբթի, փետրվարի 15-ին բենիֆիա
Լ. Գ. Գոնալդի, կը ներկայացվի ՄԵՃԻՍՏՕՖԷԼ,
երաժ. Բոյոտի:

Շուտով կը կայանայ բենիֆիա կառավարիչ
— Կ. Կելլերի, կը ներկայացվի ՄՐԵՒՕՆ,
երաժ. Տօմի:
Տոմսակները ծախվում են:

Հ Ր Ա Ի Բ
Փետրվարի 13-ին, կիրակի, ժամը 10-ին
առաւօտեան, Նորաշէնի ս. Աստուածածնի ե-
կեղեցու լինելու է առաջին անգամ ծխակա-
ն ժողով՝ նոր երկցփոխ ընտրելու, ուստի սրա-
նով հրաւիրում են ծխակալներին ներկայ լի-
նել յիշեալ եկեղեցում ընտրութեանը մաս-
նակցելու:

Գործակալ ա. մ. Թիֆլիսի՝
Գրիգոր Ա. Բ. Մանգալուսի

ԲԺԻՂ Ա. ՄԻՐՅԱՐԵԱՆԸ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, մոր-
թու և վնասական ախտ ունեցող հիւանդներ
ամենայն օր, առաւօտ. 12—2. Երեկոյեան 6—8
Մեծ Վանքի փողոց, սուս Կոլոնոսի, ղեղա-
սան կից: (ա. օ.) 15—80

ԲԺԻՇՅ Ա. Չ. ՄԻՐԶՈՑԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր, ժ. 2—3 և 5—7
Երեկոյեան, իսկ սուս օրերին առաւօտեան ժա-
մը 10—11. Մօլոյակի փող. № 6.
(ա. օ.) 47—50

Լոյս է տնել և վաճառվում է
Խ Ա Փ Ա Կ
«ՀԱՐԿԵՐԸ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ»
Գիճե 40 կօպէկ

Գիճե Թիֆլիս—Գոտաշէնից գրախա-
նութիւն: Առաւօտը 5 հատ ցանկացող կարո-
ւ է ղիմել հեղինակին, «Մշակ»-ի խմբագրու-
թիւն: (2. Կ. Ն.)

Երկրեայ հաւատարմատար
Ս. Ս. ՄԷԼԻՔ-Ա. ԴԱՍՏԱՆՆԻՐ
„Практическое Руководство“
для составления бумаг по деламъ Граждан-
скаго Судопроизводства въ ЗАКАВКАЗСКОМЪ
КРАЕ, изд. 1904 года.
Գինն է 1 ռուբլի:
Վաճառվում է Թիֆլիսում. Կենտրոնական,
Թիֆլիզիկի և Գոտաշէնից գրաւաճառանոց-
ներում. Հեղինակին գիճողներ՝ (Սրիս. քովեր.
С. С. Меликъ-Адамову, Тифлисъ. Межевая ул.,
д. № 40) 10 օրինակից աւելի պահանջողները
ստանում են 20% դեղը և ճանապարհածախ
չեն վճարում: Կ. 2. 26—30

Շախմատ եւ
ամենալավ տեսակների պարտու պա-
տուստված ծառեր 1—3 տարեկան հասակի,
Աֆրիկեանի պարտուծառի այգուց Լազորե-
խում: Նոյն այգում հիմնված է ընդարձակ ցա-
նած ծառատնիկերի անտեսութիւն (ԴԻՇԵՎՈՅԵ
ХОЗЯЙСТВО) մեր սեփական ժողոված սերերից
Չարաթալի անտաններում:
Գիճե Թիֆլիս, Մէլիք-Բախամանցի խա-
նութ, Պուշկի, փող. իսկ Գորի, Կ. Աֆրիկեա-
նին: Պատկերագրի ծառայողներն ուղարկ-
վում են ձրի: (2. Կ. Ն.) 6—12

ՆՈՐ-ՆԱԽԻՉԵԱՆԻ
Իրամատիկական Ընկերութեան Վարչութիւնը վերցնելով Նոր-Նախիջևանի քաղա-
քային թատրոնը 1905—1906 թ.թ. սեպտեմբեր համար հրաւիրում է հայ ղերասանու-
հիրներ և ղերասաններ:
Պ Ա Յ Մ Ա Ն Ե Ր Ը
1) Սեպտեմբեր տնելու է 5 ամիս (հոկտեմբերի մէկից մինչև մարտի մէկը): 2) Սեպտեմբեր
տրվելու է 40 ներկայացում: 3) Սուս բաղկացած պիտի լինի 8—10 հոգուց:
Առաջարկութիւններով (Պալիտեմբեր և բեպետար) գիճել՝ Нахичевань На/Дону, При-
сязному Повѣренному Георгио Ивановичу Чубарову.
1—3 (ո.) կամ (2) Նախագահ Ընկերութեան՝ Գերգ Զուբար

Թիֆլիսի Նախարարիւնարական Ընկերութեան
Վարչութիւնը
պատիւ ունի հրաւիրելու պ.պ. բաժնետէրերին արտակարգ ընդհանուր ժողովի, ընկերու-
թեան պայմանագրի 23-դ յօդուածի համաձայն ընկերու մի բանի բաժնետէրերի յունվարի
25-ին մտցրած յայտարարութիւնը: Ժողովը կայանալու է ներկայ փետրվարի 28-ին
Երկրեայի ժամի 8-ին, Վարչութեան գրասենեակում. Սերգիսկայա փողոց, սուս Փրիդո-
նովի № 7. 12, 18, 26 1—3

Բացված է բաժանորդագրութիւն
Ե Փ Ր Ա Ն Գ Ե Ա Ն Ի
ԱՏՐՊԱՏԱԿԱՆ պատկերազարդ ժողովածուի
«Ատրպա տականը» պարունակում է իր մէջ մի շարք յօդուածներ (Թուր մօտ 30—35), որոնք
գանգալի ժամանակներում սպազորվել են պարբերական թիֆլիզի մէջ, մեծագոյն մասը
«Մուրճ» ամսագրում: Կը լինեն նաև նոր գրութիւններ, իսկ արտասպառ մասը լոյս են տեսնելու
նոր սրբագրութեամբ, ընդարձակ և ճոխացրած: Գիրքը, որ սպազորվելու է Թիֆլիսում, ու-
նենալու է 450—500 էջ, մօտ 50—60 տպեր և տեսարաններ:
Բաժանորդագրին է Ռուսաստանում 1 ռ. 50 կ. Պարսկաստանում 1 թուման, իսկ ար-
տասանմանում 5 ֆրանկ. բաժանորդագրի կանխիկ է. լոյս տեսնելուց յետոյ գրքի գի-
նը կարող է գալի կերպով բարձրանալ:
Բ ա ժ ա ն ո ղ ա գ ր ու թ ի լ ն ը ը ն դ ու ն վ ու մ է.
Ռուսաստանում. ա) Թիֆլիսում—«Հերթէս» տպարանում. բ) Բագուում—պ. Տիգրան Ռաշ-
տաճեանի մօտ. գ) Երևանում—պ. Սարգիս Օհանջանեանի մօտ. դ) Բոստով Գոնի վրա—պ.
Զաքար Ռուսաստանի մօտ (В. Садовая № 174). ե) Բաթում—պ. Սող. Յարութիւնեանի մօտ:
Պարսկաստանում. ա) Թեհրանում—պ. Յաբ Սալամեանի մօտ (ուսուցիչ). բ) Թա-
րիզում—պ. պ. Ա. Բարաջանի և Յոսէֆ Յոսէֆանի մօտ. գ) Սարսատում—հեղինակի մօտ:
Արսաստանում. ա) Եգիպտոսում—զօկտօր Կ. Փաշայեանի մօտ (Ալէքսանդրա). բ) Ա-
մերիկա—«Հայրենիքի խմբագրատանը (Boston). գ) Բուլգարիա—«Շարժումի» խմբագրատանը
(Varna): 4—20



Պրովիդոր Ա. ԱՆՐՈՒԿԱՆԵԱՆՅԻ
ԲՕՐՕ-ՆԱՅԹԱԼԱՆ
Ն ո Ր Ն ի Լ Թ Ը
Կատարելապէս ոչնչացնում է գլխի քեփը, ամրացնում է մա-
զերը և օգնում մազերի բանուց. տալիս է մազերին իրանց բնական
ու հաստատ տեսքը: Թողարտված է բժշկական վարչութիւնից,
Իբրև ոչ մի վնասակար նիւթ չը պարունակող:
Պահեստարան Кавказское Товар. торговл. аптек. товарам
Въ Тифлисъ, Баку, Батумѣ, վաճառվում է և Ռուսաստանի ղերա-
սաներում և ղերակաճառատներում:
Արժէքն է 1 ռուբլի 25 կօպէկ:
(2. 1 ան.) 31—50

Գ Է Պ Օ
ԱՌԱՋԻՆ ԿՈՎԿԱՍՏԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
„Երբ. Յակորչանեակներ եւ Սարգսեակն“
Պատրաստի հագուստեղէնի խանութում (Միքայելեան կամուրջ, Գամոյեանի սուս Պ
25—30) մշակալն ստացվում են մեծ քանակութեամբ կանանց, տղամարդկանց և երեխաների
համար ամենակերպի տարազով պատրաստած հագուստներ:
Գները չափաւոր են և առանց սակարգութեան: (ա. օ.) 17—100

ГАЛА-ПЕТЕРЪ
Գ. ՊԵՏԵՐ, հարողը
ՎԷՎԷ-ՇՎԵՏԱՐՈՒՄ:
Աշխարհում առաջին կաթէ շօղաղ: Բոլոր
ուրիշ մարկաները պատճեն են, ոչ իսկական:
5—10